

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԲԱԶՈՅԱՆ Ե. Ի.

Մեր օրերում, երբ գիտության զարգացումն արմատապես փոխել է հասարակական կյանքի պայմանները, և կառավարման արդյունավետ մեխանիզմների արմատավորումը թելադրված է ժողովրդավարության զարգացման ներկա փուլի հրամայականներով, աշխարհի առջև ծառայել է մի կարևոր հարց. ի՞նչ դեր պետք է ունենա բարձրագույն ներկայացուցչական մարմինը ժամանակակից պետության քաղաքական կյանքում: Պառլամենտի բարեփոխում, գործադիր իշխանության նկատմամբ նրա վերահսկողական գործառույթների ուժեղացում, օրինաստեղծության խթանում ու արդյունավետության բարձրացում, օրենքների կատարելագործում ու դրանց հասցեականացում. ահա մի քանիսը միայն բազմաթիվ այն խնդիրներից, որոնք այսօր մեր հասարակության մեջ շատ լուրջ քննարկման առարկա են դարձել: Պետական շինարարության ինքնուրույն կառուցման ուղին սկսելով ընդամենը 15 տարի առաջ՝ Հայաստանի Հանրապետությունը, իհարկե, չի կարող համեմատվել ժողովրդավարության կայուն արժեքների կրող հանդիսացող Հին Եվրոպայի երկրների հետ, որոնց պետական իշխանության մարմինների համակարգը ձևավորվել է ոչ միայն համեմատաբար ընդհանուր քաղաքական մշակույթի ազդեցության ներքո, այլև սեփական պետականության տևական գոյության ու դինամիկ զարգացման պայմաններում: Եվ նույնիսկ այդ պարագայում եվրոպական պետությունների մեծ մասը, արտաքննապես խոշոր ընդհանրություններ պահպանելով, պետական կառավարման հարցերում արմատավորել է սկզբունքների և տարրերի այն ամբողջությունը, որը համապատասխանում է յուրաքանչյուր երկրի ազգային հոգեկերտվածքի, պատմական միջավայրի և միայն իրեն հատուկ քաղաքական վիճակի կոնկրետ զարգացումների առանձնահատկություններին: Սակայն նույնիսկ այդքան կարճ ժամանակահատվածում ՀՀ-ում ներդրված մինչ այդ անձանոթ պետական կառավարման մոդելը, զուտ հայկական մենթալիտետին բնորոշ ներքաղաքական գործոններից ու պառլամենտական 4 ընտրությունների արդյունքում ձևավորված քաղաքական իրավիճակից ազդվելով, այնպիսի լուրջ փոխակերպման է ենթարկվել, որ այսօր արդեն, որոշ վերապահումներով հանդերձ, կարելի է խոսել սահմանադրական գործընթացների զարգացման սեփական մոդելի մասին: Խոսքը հատկապես վերաբերում է Ազգային ժողով - գործադիր իշխանություն փոխհարաբերությունների ոլորտին, որը մանավանդ վերջին տասնամյակում խոր փոփոխություններ է կրել ոչ միայն ծավալով, այլև իր բովանդակությամբ: Երբ որ հայ ժողովուրդը 1991 թ.-ին իր կամքի ազատ արտահայտությամբ՝ հանրաքվեով, Խորհրդային Միության կազմից դուրս գալու և անկախ ապրելու որոշում կայացրեց, երկիրը կանգնեց ընտրության առջև. կառավարման ինչպիսի՞ համակարգ ընտրել՝ նախագահական, թե՞ պառլամենտական: Պետական

կառավարման նախագահական ձևի կողմնակիցներն այն ժամանակ հաղթող դուրս եկան:

1990 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում ձևավորված Գերագույն խորհրդում Երկրորդ Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ հայտնվեցին բազմակուսակցական խմբակցություններ, և մասամբ ընտրությունների, մասամբ էլ դրանից հետո ընթացող ներխորհրդարանական գործընթացների հանրագումարում Խորհրդային Հայաստանը ղեկավարող միակ կուսակցությանը՝ կոմկուսը, հայտնվեց հարաբերական փոքրամասնության մեջ, և հենց այդ պատճառով էլ Գերագույն խորհուրդը իրապես դարձավ մտքերի ու գաղափարների բախման «ամբիոն»: Երկաթյա վարագույրի փլուզման հետ մեկտեղ խորհրդարան եկած նոր ուժերը իրենց հետ բերեցին նաև նոր ու առաջավոր գաղափարներ, որոնք զլխավորապես հիմնված էին Արևմուտքի ստեղծած ժողովրդավարական կայուն արժեքների վրա և հենց դրանով էլ հակադրվում էին ամբողջատիրությանն ու միակարծությանը: Նոր գաղափարների հետ երկիր մուտք գործեցին նաև նոր տնտեսական հարաբերություններ, որոնք վերափոխելու էին պետական սեփականության մենաշնորհով արտահայտվող տնտեսական նախկին կարգը: Այս ամենի հետևանքով երկրում ստեղծվել էր քաղաքական մի իրավիճակ, որի պայմաններում ազատական գաղափարներ դավանող և Գերագույն խորհրդում հարաբերական մեծամասնություն ունեցող Հայոց համազգային շարժման առաջնորդներն ուզում էին փոխել երկրում գոյություն ունեցող այն ամենը, ինչը հիշեցնում էր խորհրդայինը, այդ թվում նաև պետական իշխանության կազմակերպումը: Քաղաքական այդ իրավիճակը բնութագրվում է որպես սահմանադրական նոր իրադրություն, որի պայմաններում շեղում է նկատվում իրական գրված սահմանադրությունից:

Սահմանադրական իրավունքի տեսության մեջ «սահմանադրություն» տերմինն օգտագործվում է երկու իմաստով¹: Ձևական իմաստով դա իրավաբանական սահմանադրությունն է՝ պետության հիմնական օրենքը, որն ամրագրում է հասարակական-տնտեսական կարգը, կառավարման ձևն ու պետական կառուցվածքի ձևը, անձի իրավական վիճակն ու պետական մարմինների համակարգը: Մակայն այդ սահմանադրության պլուրակտիկ կիրառման ընթացքում երբեմն տեղի են ունենում հասարակական-քաղաքական բնույթի այնպիսի երևույթներ, որոնց ազդեցության հետևանքով ստեղծված փաստացի իրավիճակը զգալիորեն տարբերվում է սահմանադրությամբ ամրագրվածից: Հետևապես, երկրորդ իմաստով «սահմանադրություն» տերմինն օգտագործվում է հենց փաստացի իմաստով, այսինքն՝ արտահայտում է որևիցե կոնկրետ երկրում ստեղծված փաստացի քաղաքական իրավիճակը, և ինչպես երևում է վերը շարադրվածից, իրավաբանական ու փաստացի սահմանադրությունները միշտ չէ, որ համընկնում են: Այս երևույթը սոցիալ-քաղաքական գործընթացների բնականոն զարգացման մշտական ուղեկիցն է մարդկային հասարակության ստեղծման օրվանից ի վեր, որի պայմաններում հասարակական հարաբերությունների զարգացման բաղադրիչները գրեթե միշտ իրենց

¹ Мишин А., Государственное право буржуазных стран, М., 1976, с. 70.

հետևում են թողնում այդ հարաբերությունների կանոնավորմանը կոչված նորմատիվ կարգավորիչներին: Տվյալ դեպքում Հայաստանում տեղի ունեցած միանգամից երկու այդպիսի հասարակական-քաղաքական իրադարձության հետևանքով (աշխարհաքաղաքական իրադրություն-ԽՍՀՄ փրլուզում, անկախության նվաճում) երկրում ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, որի պայմաններում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունը ձևավորել էր բոլորովին նոր սահմանադրություն:

Ի վերջո, սահմանադրության էությունը, ըստ գերմանացի մտածող Ֆերդինանդ Լասալի հանճարեղորեն պարզ բնորոշման՝ «տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող քաղաքական ուժերի փաստացի հարաբերակցությունն է»²: Այդ նոր դրությունն էլ իրավաբանորեն փաստելու համար Գերագույն խորհուրդը 1991 թ. սեպտեմբերի 25-ին ընդունեց «Անկախ պետականության հիմնադրությունների մասին» սահմանադրական օրենքը, որով վավերացվեց գործող սահմանադրության մեջ փոփոխություններ չմտցնելու դիրքորոշումը³: «Մինչև Հայաստանի Հանրապետության նոր սահմանադրության ընդունումը,- ասված է սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածում,- գործող սահմանադրությունն ու օրենքները գործում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին և «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ընդունված օրենսդրական ակտերին»:

1991-1993 թթ. Հանրապետության Նախագահը, պատճառաբանելով պատերազմի և երկրում ստեղծված սոցիալ-քաղաքական բարդ իրավիճակի պայմաններում պետության օպտիմալ կառավարման համար իր լիազորությունների անբավարարությունը, անձամբ դիմելով խորհրդարանին՝ հորդորում և պահանջում էր իրեն զիջել վերջինիս պատկանող առանցքային լիազորությունների մի մասը:

Բնականաբար, խոսքը վերաբերում է կառավարության կազմավորման, արտաքին քաղաքականության ուղղությունների որոշման, դատավորների, ինչպես նաև պետական բարձրաստիճան պաշտոնյաներ նշանակելու հետ կապված իրավասություններին: Հանրապետության Նախագահի հետ սահմանադրական այդ «պայքարի» հետևանքով խորհրդարանը կատարելապես մեկուսացվեց վարչապետի նշանակման և հետևապես կառավարության կազմավորման հարցում որևիցե դերակատարություն ունենալու գործընթացից: ՀՀ Նախագահն այլևս իր հայեցողական իրավասությամբ էր նշանակում և ազատում վարչապետին, վերջինիս ներկայացմամբ՝ կառավարության անդամներին, և ըստ էության, ինքնուրույն որոշում կառավարության գործունեության ուղղությունները: Սակայն ՀՀ Նախագահի և Գերագույն խորհրդի «հակամարտությունը» կառավարության կազմավորման հարցերում առաջնային դեր ունենալու համար բավական դինամիկ ընթացք է ունեցել, և վերջինս բոլորովին էլ հեշտությամբ չի զիջել այդ առաջնությունը: Եթե վերլուծենք խորհրդարանի և Նախագահի փոխհարաբերությունների ամբողջ սպեկտրը 1991 թ.-ից մինչ օրս վերջինիս կամքին ներկայացուցչական մարմնի ընդդիմանալու

² Лассаль Ф., *О сущности конституции (Сочинения, т. 2, М., 1925, с. 13).*

³ Խաչատրյան Հ., Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Ե., 1997, էջ 16:

տեսանկյունից, ապա կարելի է ասել, որ այդ առումով «ամենաանհնազանդ» պառլամենտը եղել է 1990-1995 թթ. գումարման Գերագույն խորհուրդը: Դա ուներ իր օբյեկտիվ պատճառները և արդյունք էր միանգամայն որոշակի սոցիալ-քաղաքական իրադրության: Նախ, պետք է ասել, որ այդ խորհրդարանն ընտրվել էր 1990 թ. մայիսի 20-ին տեղի ունեցած՝ մեր երկրում երբևիցե անցկացված խորհրդարանական ամենաազատ ընտրությունների արդյունքում և պետական իշխանության մարմինների համակարգում իր ունեցած ծանրակշիռ դերով համարվում էր Խորհրդային Հայաստանի «ամենագոր» պառլամենտի իրավահաջորդը: Մյուս կողմից, այդ Գերագույն խորհուրդն իր 260 պատգամավորների քաղաքական կազմով՝ ի դեմս շրջանային ու քաղաքային գործադիր կոմիտեների գործող և նախկին ղեկավարների, գիտության ու մշակույթի և հասարակական գործիչների, բոլորովին էլ համաձայն չէր այն ուժերի հետ, որոնք նախատեսել էին երկրի կառավարման պառլամենտական ձևից դեպի նախագահականին անցնելու կտրուկ փոփոխությունը և դրա հետևանքով կառավարության կազմավորման գործընթացում իրեն վերապահվող խորհրդանշական դերի հատկացումը:

1990-1991 թթ. հայտնի իրադարձությունների հետևանքով երկրում ձևավորված անիշխանության պայմաններում պետական կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Գերագույն խորհրդում առաջարկություններ էին հնչում փոխել Գերագույն խորհրդի նախագահության ձևավորման կարգը⁴ և նրան գործուն լիազորություններ վերապահել Մինիստրների խորհրդի կազմավորման և նրա գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հարցերում: Պետական իշխանության ինստիտուտների հեղինակության նվազման փաստն այն աստիճանի ակնհայտ էր, որ Գերագույն խորհրդի՝ 1991 թ. հունիսի 24-ի նիստում ՀՀՇ նախագահ Վանո Սիրադեղյանը ստիպված խոստովանում էր. «Այս մի քանի ամիսների զարգացումները ցույց տվեցին, որ երկրում իշխանություն չունի ո՛չ Գերագույն խորհուրդը և ո՛չ էլ Մինիստրների խորհուրդը, և ժողովուրդը չի հավատում ո՛չ վերջիններիս, ո՛չ էլ Հայոց Համազգային Շարժմանը ...»⁵:

Պակաս հետաքրքրական չէ նաև այն փաստը, որ երբ Հայաստանի անկախության հռչակումից հետո երկրում ստեղծված նոր իրողություններն ամրագրելու համար նոր սահմանադրություն ընդունելու հարցը հրամայական էր դարձել, և Գերագույն խորհրդի որոշմամբ 1990 թ. նոյեմբերի 5-ին Հիմնական օրենքի նոր տեքստի մշակման համար պետական, քաղաքական գործիչներից և իրավունքի մասնագետներից 20-հոգանոց սահմանադրական հանձնաժողով ստեղծվեց, ապա չգիտես ինչու այդ հանձնաժողովն իր առաջին նիստը գումարեց միայն երկու տարի անց՝ 1992 թ. հոկտեմբերի 15-ին: Դա նախ և առաջ հենց սահմանադրական գործընթացների բնականոն զարգացման ընթացք էր՝ այն ժամանակվա Հայաստանի քաղաքական ուժերի բավականին բարդ տեղաբաշխման

ար-

⁴ *Голос Армении*, 25.VI.1991. Այդ առաջարկությունը Գերագույն խորհրդի հունիսի 24-ի նիստում հնչեցրել է Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Գ. Վարությունյանը:

⁵ *Голос Армении*, 25.VI.1991.

դյունքում ձևավորված իշխանության օրենսդիր ու գործադիր բնեռների ժամանակավոր հավասարակշռությամբ պայմանավորված: Նախագահն ու նրան սատարող քաղաքական ուժերը երկրի հետագա զարգացման իրենց պետական մոդելը հաստատելու համար ընդհուպ մինչև 1993 թ. գարունը չունեին վճռական մեծամասնություն Գերագույն խորհրդում, իսկ պատերազմական վիճակի ու տնտեսության համատարած քայքայմամբ ուղեկցվող քաղաքական քառսի ու անիշխանության պայմաններում չէին կարողանում իրավիճակի փաստացի տերերը դառնալ երկրում:

Այս հարթության վրա էլ ծավալվեց քաղաքական ուժերի դասավորությամբ պայմանավորված երկու իրարամերժ դիրքորոշումների հակամարտությունը, որն արտահայտվեց ոչ միայն նոր Սահմանադրության հայեցակարգի վերաբերյալ բուռն բանավեճում, մասնավորապես Հայաստանի Հանրապետության կառավարման ձևի ընտրության (նախագահական, թե՛ պառլամենտական), սահմանադրության ընդունման եղանակի շուրջ, այլ նաև սահմանադրական հանձնաժողովից անկախ, այլընտրանքային նախագծերի մշակմամբ: Ի տարբերություն Հանրապետության Նախագահի և նրան սատարող ազատական ուժերի, որոնք ձգտում էին երկրում հաստատել նախագահական հանրապետություն, այլընտրանքային նախագծերի մեծ մասը Հայաստանի ապագան տեսնում էր պառլամենտական հանրապետության տեսքով:

1993 թ. ամռանը հրապարակ իջած ՀՅԴ կուսակցության նախագիծը Հանրապետության Նախագահին չէր դիտում որպես պետական իշխանության որևիցե ճյուղի կրող և առաջարկում էր նրան ընտրել պառլամենտի, կառավարության և Սահմանադրական դատարանի համատեղ նիստում: Այդ նախագիծը կազմված էր պառլամենտարիզմին ներհատուկ ավանդույթների ոգով և ելնում էր ուժեղ պառլամենտի հաստատման անհրաժեշտությունից: Ռամկավար ազատական կուսակցության ներկայացրած նախագիծը նույնպես նախատեսում էր իշխանության մյուս ճյուղերի հանդեպ որևէ գերակայություն չունեցող Նախագահի ինստիտուտի առկայությունը: Ավելի ուշ Կոմունիստական կուսակցությունն իր հեղինակած նախագծում առաջարկում էր ստեղծել անուղղակի ճանապարհով ընտրվող նախագահի պաշտոն, որը կառավարության կազմավորման հարցում առաջնությունը պետք է զիջեր պառլամենտին:

Ներպետական կյանքում պառլամենտի գերակա դերն ամրագրող մեծ թվով նախագծերի ի հայտ գալը բոլորովին էլ պատահական չէր և պայմանավորված էր ազգային մտածելակերպի յուրահատկություններով: Ի տարբերություն հարևան այլ երկրների՝ բացարձակապետությունը, որպես պետական կառավարման ձև, չի արմատավորվել Հայաստանում, և հայտնի է, որ դեռևս վաղ միջնադարում Արշակունի թագավորները երկրի համար կարևորագույն նշանակության խնդիրները միանձնյա չէին վճռում, այլ դրա համար Բագրևանդի դաշտում հրավիրում էին ժողովրդի բոլոր խավերի ներկայացուցիչներից կազմված ժողովներ⁶, որոնք որոշում էին ընդունում ձայների մեծամասնությամբ: Բայց առաջին անգամ պառլամենտարիզմի գաղափարը հայ իրականության մեջ իր արտացոլումը

⁶ Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, Ե., 1968, էջ 102, 110:

գտավ 1773 թ. Մադրասում հրատարակված Հակոբ Շահամիրյանի «Որոգայթ Փառաց» գրքույկում, որում թեպետ նախատեսված էր Նախարարի (Նախագահ) պաշտոնը, սակայն երկրում տեղ ու տնօրեն էր լինելու բարձրագույն ներկայացուցչական մարմինը՝ Հայոց Տուն անվանումով⁷:

XIX դ. պառլամենտարիզմի սկզբունքները դրսևորվեցին 1860 թ. արևմտահայերի ազգային սահմանադրության մեջ, որի ուժով Օսմանյան կայսրության մեջ հայերի ներքին կյանքի խնդիրների կարգավորման իրավունքը պատկանում էր 140 պատգամավորից բաղկացած Ազգային ընդհանուր ժողովին:

Ներկայացուցչական առաջին մարմիններն ի հայտ են եկել դեռևս XIII դ., սակայն ներպետական կյանքում պառլամենտի գործուն դերի մասին կարելի է խոսել միայն սկսած XVII դ., երբ Մեծ Բրիտանիայում թագավորին գլխատելուց հետո օրենքներ ընդունելու միջոցով այդ երկրի պետական իշխանության հիմքերի սահմանման իրավունքն անցավ պառլամենտին: Այդ մարմնի ներկայացուցչականությունը հակադրելով թագավորի իշխանության ինքնակալ բնույթին՝ նոր ձևավորվող բուրժուազիան, իշխանության ծագման հիմքերի և աղբյուրների վերաբերյալ գոյություն ունեցողից տրամագծորեն հակառակ գաղափարների արմատավորմամբ, փորձում էր կիսել պետական իշխանությունը թագավորի հետ՝ վերջինիս վերապահելով իշխանության գործադիր թևը: Հիմնավորելով համազգային ներկայացուցչական հաստատության անհրաժեշտությունը՝ իշխանությունների տարանջատման տեսության հեղինակներից Մոնտեսքյուն իր «Օրենքների ոգու մասին» հայտնի աշխատության մեջ պնդում էր, որ «ընտրովի ներկայացուցիչների մեծ առավելությունն այն է, որ նրանք ընդունակ են գործեր քննարկել»: Ջարգացնելով վերը նշված միտքը՝ Մոնտեսքյուն գրում է. «Այն պատճառով, որ ազատ պետություններում ամեն մարդ, որը համարվում է ազատ, պետք է ինքն իրեն կառավարի, այնտեղ օրենսդրական իշխանությունը պետք է պատկանի ամբողջ ժողովրդին: Բայց որքանով որ խոշոր պետություններում դա անհնարին է, իսկ փոքրերում՝ կապված մեծ անհարմարությունների հետ, ապա անհրաժեշտ է, որ ժողովուրդը իր ներկայացուցիչների միջոցով կատարի այն ամենը, ինչը ինքը չի կարող կատարել»⁸: Միասնական իշխանությունը առանձին թևերի տարաբաժանելու մեկ այլ տեսաբան՝ Ջոն Լոկը, համոզված էր, որ պետության կողմից քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները լիարժեք և արդար իրականացնելու համար պետք է նրա հանրային-իրավական լիազորությունները տարանջատել միմյանց հավասարակշռող բաղկացուցիչ մասերի այնպես, որ դրանք մեկը մյուսին զսպեն իշխանական չափազանց հավակնություններից: Այս տեսանկյունից հանրային-իշխանական գործունեության բոլոր տեսակները և դրանք իրականացնող պետական մարմինները, ըստ Լոկի, պետք է դասավորվեն այնպես, որ իր բնույթով բարձրագույն համարվող օրենսդրական իշխանությանը ենթարկվեն բոլոր այլ իշխանությունները⁹:

⁷ **Համբարձումյան Ռ.**, «Որոգայթ Փառաց» ակունքները, այժմեականությունը և առանձնահատկությունները, Ե., 1999, էջ 18:

⁸ **Монтескье Ш.**, *Избранные произведения*, М., 1955, с. 292-293.

⁹ *Проблемы теории государства и права* (под. ред. М. Марченко), М., 1999, с. 89.

Միասնական իշխանության առանձին թևերի տարանջատման այդ գաղափարների զարգացման համատեքստում էլ ձևավորվեց և տարածում ստացավ պետական մեխանիզմում օրենսդիր մարմնի առանձնահատուկ դերն ամրագրող՝ պառլամենտարիզմի տեսությունը: Հետևաբար, նույն տրամաբանությունը զարգացնելով՝ այսօր պառլամենտարիզմ ասելով պետք է հասկանալ հասարակության պետական ղեկավարման այնպիսի համակարգ, որը բնորոշվում է իշխանությունը օրենսդիր, գործադիր և դատական թևերի բաժանումով՝ պառլամենտի գերակա դիրքի առկայությամբ: Մի փոքր այլ ձևակերպմամբ է դա ընդունում պրոֆեսոր Ա. Միշինը¹⁰, սակայն հաստատում է, որ տեսության մեխը հենց պառլամենտի գերակա դիրքն է:

Այդ տեսակետից անհասկանալի է վաստակաշատ պետականագետ Շ. Խաչատրյանի բնորոշումը, որը պառլամենտարիզմ ասելով նույնպես հասկանում է իշխանությունների երեք թևերի տարանջատմամբ բնութագրվող մի համակարգ, որը, սակայն, դրսևորվում է սոսկ պառլամենտի առկայությամբ¹¹: Բանն այն է, որ պառլամենտը և պառլամենտարիզմը միմյանց փոխկապակցված հասկացություններ են, բայց բնավ ոչ՝ համագոր: Պառլամենտարիզմը չի կարող գոյություն ունենալ առանց լիիշխան և ուժեղ պառլամենտի. դա նրա հիմքն է: Բայց պառլամենտարիզմը միաժամանակ պառլամենտի արտաքին հատկանիշն է, որը հանգամանքների բերումով կարող է կորցնել:

Ուժեղ ու գործուն պառլամենտն է համարվում պառլամենտարիզմի էության հիմնաքարը և ոչ թե պարզապես նրա առկայությունը: Այսօր աշխարհում չկա մի երկիր, որի քաղաքական համակարգում պառլամենտ չլինի: Իսկ պառլամենտն իր գոյությունը կարող է պահպանել նաև առանց պառլամենտարիզմի էական տարրերի: Օրինակ, Ֆրանսիայի 1958 թ. սահմանադրությամբ հաստատված այդ երկրի օրենսդիր մարմնի կարգավիճակը: Հետաքրքիր է, որ այդ վիճակին ֆրանսիական պառլամենտը հասել է 1946 թ. սահմանադրության ընդունումից հետո՝ ընդամենը 12 տարվա ընթացքում, որն իրավամբ համարվում է այդ երկրի բազմաթիվ հիմնական օրենքների մեջ պառլամենտարիզմի սկզբունքների հաստատման ամենաակնառու հանգրվանը:

Պառլամենտարիզմի պատմության ամբողջ ժամանակահատվածում պետական իշխանության մարմինների համակարգում ներկայացուցչական հաստատությունների ունեցած տեղի և դերի մասին հարցը ամենաբարդերից է ժողովրդավարական քաղաքական ռեժիմների կայացման ժամանակ: Դա պայմանավորված է մի կողմից նրանով, որ պետական կարևորագույն որոշումների ընդունման ժամանակ հենց պառլամենտն է ապահովում հասարակության բոլոր շերտերի կարծիքների հաշվառումը, մյուս կողմից՝ կարծիքների այդ բազմազանությունը հաճախ խանգարում է միասնական դիրքորոշման ձևավորմանն ու դրա իրականացմանը: Ամեն դեպքում դա իրական ժողովրդավարության պատկերն է, և միայն մտքերի

¹⁰ Мишин А., указ. соч., с. 296.

¹¹ Խաչատրյան Ն., Իշխանությունների տարանջատում և պառլամենտարիզմ, Ե., 1994, էջ 26:

բազմազանության ու դրանց բախման միջոցով է իրացվում ժողովրդաիշխանությունը:

Համաշխարհային փորձի մեջ բացառություն չի կազմում նաև Հայաստանի Հանրապետությունը: Սկզբում մեր պետական շինարարությունն ընթացավ հիմնականում ամերիկյան ուղիով: Նախագահի պաշտոնի հետ հիմնվեց նաև փոխնախագահի պաշտոնը, Մինիստրների խորհրդի կազմավորման մեջ Գերագույն խորհրդի դերն աստիճանաբար նվազեց, պետական իշխանության կազմակերպումն իրականացվեց իշխանությունների տարանջատման սկզբունքին համապատասխան: Բայց երկրում ընթացող քաղաքական գործընթացներն աստիճանաբար փոփոխություններ էին մտցնում կառավարման մեխանիզմների մեջ: Փաստորեն, չորս տարվա ընթացքում՝ 1991-1995 թթ., հանրապետությունում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական զարգացումների հետևանքով երկրում ձևավորվել էր փաստացի սահմանադրություն, որը դրսևորվում էր քաղաքական ուժերի հարաբերակցության մեջ նախագահամետ ուժերի գերակշռությամբ: Մնում էր միայն օրինականացնել այդ իրավիճակը, որն էլ իրականացրեց 1995 թ. հուլիսի 5-ին խորհրդարանական ընտրություններին զուգահեռ ընթացող համաժողովրդական հանրաքվեն:

1995 թ. ուժի մեջ մտած սահմանադրությունը պետական իշխանությունը կազմակերպում էր բոլորովին այլ սկզբունքներով և նրա թևերի միջև լիազորությունների բաշխման չափանիշով չէր համապատասխանում պետական կառավարման ոչ նախագահական և ոչ էլ պառլամենտական դասական մոդելներից և ոչ մեկին:

Սահմանադրության գլուխների հերթականությունն արդեն ցույց է տալիս, որ նոր իրողությունները երկիրն իսկապես հեռացնում են զարգացման ամերիկյան մոդելից, քանի որ ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ նրա օրինակով նախագահական կառավարման ձև ունեցող Արգենտինայի, Բրազիլիայի, Մեքսիկայի և այլ երկրների հիմնական օրենքներն առաջնահերթ ամրագրում են օրենսդիր իշխանության կարգավիճակը և հետո միայն պետական այլ ինստիտուտները, մինչդեռ Հայաստանի սահմանադրությունը երկրի պետական ինստիտուտների ամրագրման հարցում նախապատվությունը տալիս է ՀՀ Նախագահին և հետո միայն (IV գլուխ) օրենսդիր իշխանությանը: Սահմանադրության դրույթների մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ վարչապետի նշանակման և կառավարության կազմավորման հարցերում Ազգային ժողովը որևէ մասնակցություն չունի, և վարչապետի ինչպես նշանակման, այնպես էլ ազատման գործառույթները վերաբերում են ՀՀ Նախագահի ինքնահայաց լիազորությունների ոլորտին: Սակայն դա վերաբերում է մինչև 2005 թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեն գոյություն ունեցող իրավիճակին: Ազգային ժողովի առջև կառավարությունը քաղաքական պատասխանատվություն չի կրում և չնայած Հիմնական օրենքի 74-րդ հոդվածը պարտավորեցնում է վերջինիս նորընտիր Ազգային ժողովի կամ իր կազմավորումից հետո՝ քսանօրյա ժամկետում, սեփական գործունեության ծրագրին հավանություն տալու համար օրենսդիր մարմնի առջև իր վստահության հարցը դնել, սակայն իրականում այդ վերապահումը «միս ու արյուն» չի ստանում, քանի որ 1995 թ. խորհրդարանական ընտրություններից մինչև այսօր երկրում ձևավորված քաղաքական իրավիճակի կայուն ավանդույ-

թի ուժով ՀՀ Նախագահին Ազգային ժողովում ունի իրեն սատարող ուժերի վճռական մեծամասնություն, որը պարզապես չի ուզի և չի կարող հակառակվել Նախագահին: Հետաքրքիր է, որ Ազգային ժողովի բոլոր երեք գումարումների ընթացքում Սահմանադրության 74-րդ հոդվածով սահմանված կարգով կառավարությանն անվստահություն հայտնելու բանաձև երբևիցե չի ներկայացվել:

Այսպես, 1995 թ. մարտի 27-ի «Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» սահմանադրական օրենքի համաձայն ձևավորված առաջին գումարման Ազգային ժողովը կազմված էր 190 պատգամավորից, որտեղ մանդատները բաշխվել էին հետևյալ կերպ. Նախագահին սատարող «Հանրապետություն» և «Շամիրամ» խմբակցություններ՝ համապատասխանաբար 115 և 8 տեղ, ՀԿԿ՝ 7, ԱԺՄ՝ 5, ԱԻՄ՝ 3, ՀՅԴ և ՌԱԿ՝ մեկական, և ՄԴՀԿ՝ 2 տեղ:

Պատգամավորական խմբակցություններում չընդգրկված 31 պատգամավորներ կազմեցին «Բարեփոխումներ» խումբը, որը նույնպես հարում էր նախագահական պալատին: Խորհրդարանական ընդդիմությունն ուներ ընդամենը 15 մանդատ, որն ակնհայտորեն անբավարար էր կառավարությանն անվստահության բանաձև ներկայացնելու համար Սահմանադրության 74-րդ հոդվածով պահանջվող պատգամավորների ձայների 1/3-ից: Հավելենք, որ 1995 թ. ընտրություններն ընթացան ընտրական կորպուսի վրա գործադիր իշխանության կիրառած իշխանական ռեսուրսի ներգործության ամենալայն դրսևորումներով, ինչը «կատարելագործվեց» հետագա ընտրությունների ժամանակ: Գործադիր իշխանություն ասելով՝ ՀՀ Նախագահին ու կառավարությանը դիտում ենք մեկ ամբողջության մեջ և չենք առանձնացնում իրարից: Չնայած Սահմանադրությունը կառավարության կարգավիճակն ամրագրել է առանձին գլխով, և թվում է, թե կառավարության ղեկավարն էլ պիտի լինի նախարարների աշխատանքը համակարգող վարչապետը, բայց Հիմնական օրենքի 3-րդ գլուխն ու 5-րդ գլխի 85-րդ և 86-րդ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ Նախագահը, պետության գլուխը լինելուց բացի, նաև կառավարության գլուխն է (մինչև 2005 թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով հաստատված սահմանադրական փոփոխությունների ուժի մեջ մտնելը): Հանրապետության Նախագահը ոչ միայն նշանակում և ազատում է վարչապետին, այլև վերջինիս ներկայացմամբ իր հրամանագրով սահմանում է կառավարության կառուցվածքն ու որոշում նրա գործունեության ուղղությունները, հրավիրում և վարում է կառավարության նիստերը կամ էլ դա հանձնարարում է վարչապետին, իր ստորագրությամբ վավերացնում է կառավարության որոշումները, թեև Սահմանադրության մեջ սխալ է օգտագործվել «վավերացում» տերմինը, երբ խոսքը կրկնավավերացման (կոնտրասիգնացիայի) ինստիտուտի մասին է¹²: Մինչդեռ ՀՀ Նախագահին օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությանը հետևողի և պահպանողի արբիտրի իր կեցվածքով և սահմանադրաիրավական կարգավիճակի տրամաբանությամբ դուրս է գալիս իշխանության երեք հայտնի թևերի սահման-

¹² Խաչատրյան Հ., Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, էջ 285:

ներից և կազմում իշխանության ինքնուրույն՝ նախագահական ճյուղ: Ուսումնասիրողներից ոմանք¹³ նախագահական իշխանության այդպիսի հատկությունը բացատրում են նրանով, որ պետության գլխի մոդելը կազմող բոլոր այն լիազորությունները, որոնք կոչված են ապահովելու պետության միասնականությունն ու պետական բոլոր մարմինների հավասարակշիռ և համաձայնեցված գործունեությունը, չեն կարող գնահատվել որպես զուտ գործադիր բնույթի: Այսպես է կարծում նաև Ա. Հարությունյանը՝ ասելով, որ Ֆրանսիայի, Ռուսիայի, Հայաստանի նման պետություններում նախագահական իշխանությունը չի կարելի նույնացնել գործադիր իշխանության հետ¹⁴: Կառավարման այդպիսի մոդելի հայրենիքը Ֆրանսիան է՝ իր 1958 թ. սահմանադրությամբ: Այդ մոդելը, իր մեջ համակցելով նախագահական և պառլամենտական կառավարման տարրեր, ստեղծել է պետական իշխանության իրացման այնպիսի ձև, որի պայմաններում Նախագահի ձեռքում կենտրոնացած գերիզոր լիազորությունները նրան թույլ են տալիս ներգործել իշխանության ցանկացած թևի վրա: Բավական է վկայակոչել Ֆրանսիայի (նաև Հայաստանի) Նախագահի՝ օրենսդիր մարմինն արձակելու ոչնչով չհիմնավորված իրավունքը, որը 1962 և 1968 թթ. կիրառել է նախագահ Դը Գոլը՝ Ազգային ժողովում ձևավորված՝ կառավարությանն ընդդիմադիր սոցիալիստական ուժերի մեծամասնությունից ազատվելու համար: Հատկանշական է, որ այդ շրջանն ընդհանրապես Եվրոպայում բնութագրվել է հոգուտ կառավարությունների պառլամենտների լիազորությունների նվազման միտումով¹⁵: Նույն Ֆրանսիայում պառլամենտի երկու պալատները զրկված են իրենց կանոնակարգերն ինքնուրույն ընդունելու օրինավոր իրավունքից¹⁶: Այդ իրավունքը պատկանում է կառավարությանը: Նույնիսկ պառլամենտարիզմի հայրենիք համարվող Մեծ Բրիտանիայում այդ տարիներին կարծիքներ են հնչել պառլամենտի գերակայության տեսության «զառամյալության» մասին¹⁷:

Բայց եվրոպական պետություններն իրենց ստեղծած ժողովրդավարության կայուն արժեքներով և քաղաքացիական կայացած հասարակություններով ապահովագրված են գործադիրի չափազանց ուժեղացումից ծնվող ավտորիտարիզմի վտանգից, մինչդեռ մեր երկիրը իր փխրուն ժողովրդավարությամբ, իրավագիտակցության ցածր մակարդակ ունեցող և իներտ հասարակությամբ, բոլորովին էլ ապահովված չէ դրանից: Այդ պատճառով էլ դժվարությամբ կարելի է համաձայնել Ժ. Ջեյնսի հարյանին, որի կարծիքով, Հայաստանի համար առավել ընդունելի է սահմանադրական զարգացման Ֆրանսիայի փորձը¹⁸:

¹³ Ноздрачев А., Конституционные основы исполнительной власти в РФ, М., 1996, с. 45.

¹⁴ Հարությունյան Ա., ՀՀ Նախագահի ինստիտուտը, Ե., 1996, էջ 23:

¹⁵ Խաչատրյան Հ., Պառլամենտ և պատգամավոր, Ե., 1994, էջ 42:

¹⁶ Крутоголов М., Парламент Франции, М., 1988, с. 96.

¹⁷ J. Mackintosh, The British Cabinet, London, 1968, p. 597.

¹⁸ Джангирян Ж., Разделение властей в Республике Армения, М., 2003, с. 69.

Պարզապես մեր Սահմանադրությունը մեծապես պատճենվել է ֆրանսիականից, և առանձին դրույթների ձևակերպման նույնականությունն ուղղակի աչքի է զարնում:

Այսօր Եվրոպայում ընթացող ընդհանուր ինտեգրացիոն ժողովրդավարական գործընթացների ազդեցությամբ շատ բան է փոխվել ֆրանսիական հասարակության մեջ և դրա հետևանքով «կեսարական»¹⁹ համարվող սահմանադրության որոշ դրույթներ պարզապես չեն կիրառվում, այսինքն՝ փաստացի սահմանադրությունը դարձյալ շեղվում է իրավաբանականից դեպի ավելի ժողովրդավարական ռեժիմը: Սահմանադրական փոփոխությամբ կրճատվել է Ֆրանսիայի Նախագահի պաշտոնավարության ժամկետը յոթ տարուց մինչև հինգի, և վերջին տարիների ընթացքում ներկայացուցչական մարմնի դերն ու հեղինակությունն այդ երկրում զգալիորեն բարձրացել են:

Պետք է ասել, որ մեր երկրում նույնպես 1996 թ.-ից հետո սկսեց շեղում նկատվել իրավաբանական սահմանադրությունից, որը հետևանք էր մի շարք սոցիալ-քաղաքական բնույթի իրադարձությունների: Նախ 1996 թ. նախագահական ընտրություններում գործող Նախագահի վիճահարույց հաղթանակը հանգեցրեց հասարակության երկփեղկման և ներքաղաքական իրավիճակի ծայրահեղ սրման: Իսկ սեպտեմբերի 26-ին ընտրության արդյունքներից դժգոհ բազմահազարանոց ժողովրդի կողմից Ազգային ժողովը գրավելու փաստը հանգեցրեց իրավիճակի ցավալի հանգուցալուծման, գործի դրվեցին գրահամեքենաներն ու ուժային ճնշամիջոցները. ժողովրդավարական իրավունքների գործողությունը ժամանակավորապես դադարեցվեց:

Մրանցով պայմանավորված՝ Նախագահի հեղինակությունը նկատելիորեն ընկավ, իսկ մի շարք ներքաղաքական զարգացումների ու արտաքին ազդակների ներգործության հետևանքով 1998 թ. հասցրեց նրա պաշտոնանկությանը: Ընդ որում, դա կատարվեց իր բացասական ազդեցությամբ շատ վտանգավոր համարվող սահմանադրական եղանակով, երբ մի գիշերվա մեջ Նախագահին սատարող «Հանրապետություն» խմբակցության պատգամավորների մեծ մասն անցավ Տեր-Պետրոսյանի հրաժարականը պահանջող քաղաքական ուժերի կողմը: Փաստորեն, քաղաքական իրավիճակի փոփոխությունն իրականացվեց սահմանադրական մեխանիզմների գործադրմամբ, որն արտահայտվեց Ազգային ժողովի մեծամասնության վստահությունը վայելող վարչապետի՝ ժամանակավորապես պետության գլուխը դառնալու փաստով (Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանի հրաժարականից հետո) և Սահմանադրության 53-րդ հոդվածի պահանջով դրանից հետո՝ քառասուներորդ օրը՝ նախագահական արտահերթ ընտրությունների նշանակումով:

1999 թ. գարնանը կայացած խորհրդարանական ընտրությունները նոր էջ բացեցին Երրորդ Հանրապետության սահմանադրական զարգացման պատմության մեջ, որը նշանավորվեց մեր սահմանադրական պրակտիկայում անհայտ և Սահմանադրությունից չբխող մի նոր երևույթի դրսևորմամբ: Ինչպես հայտնի է (առանց 2005 թ. նոյեմբերի 27-ի փո-

¹⁹ Мишин А., указ. соч., с. 71.

փոխությունների), գործող Սահմանադրության 55-րդ հոդվածի չորրորդ մասի կարգադրագրով ՀՀ Նախագահը ինքնահայաց կերպով է նշանակում վարչապետին, մինչդեռ ընտրություններում հաղթանակ տարած «Միասնություն» դաշինքը նախօրոք ձեռք բերված համաձայնությունների ուժով զրկեց ՀՀ Նախագահին ինքնահայաց գործելու հնարավորությունից, ինչի հետևանքով դաշինքի ցուցակի առաջին համարով հանդես եկող Կարեն Դեմիրճյանն ընտրվեց Ազգային ժողովի նախագահ, իսկ վարչապետի պաշտոնին նշանակելու համար օրենսդիր մարմնի պատգամավորների մեծամասնության կամքով ՀՀ Նախագահին առաջարկվեց այդ ցուցակի երկրորդի՝ Վազգեն Սարգսյանի թեկնածությունը: Ըստ էության, այդ երևույթը հատուկ է կառավարման պառլամենտական համակարգերին: Ահավասիկ մի նոր փաստ ևս, որ քաղաքական ուժերի փաստացի հարաբերակցությունը կարող է ձևավորել երկրում բոլորովին նոր սահմանադրական իրավիճակ՝ առանց սահմանադրությամբ ուղղակի ամրագրված լինելու: Սահմանադրական այդ պրակտիկան վաղուց ի վեր կիրառվում է Մեծ Բրիտանիայում, և այդ երկրի որևէ իրավական ակտով չի սահմանվում, որ խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարած կուսակցության ղեկավարին միայն անպայման պետք է նշանակի վարչապետ: Այդ բոլոր հարաբերությունները Մեծ Բրիտանիայում կարգավորվում են սահմանադրական իրավունքի աղբյուր համարվող կոնվենցիոն նորմերով կամ համաձայնություններով, որոնք, զրկված չլինելով հանդերձ, խստորեն կատարվում են և երբեք չեն խախտվում:

1999 թ. խորհրդարանական ընտրությունների հետևանքով Ազգային ժողովում դարձյալ ձևավորվեց ՀՀ Նախագահին և վարչապետին սատարող կայուն մեծամասնություն, որը ձևավորվել էր երկու կուսակցությունների՝ ՀԺԿ-ի և Հանրապետականի հենքի վրա: Բայց ՀՀ Նախագահն այդպիսի պայմաններում չէր կարողանում լիարժեք իրացնել սահմանադրաիրավական կարգավիճակից բխող իր հնարավորությունները գործադիր իշխանության ոլորտում, քանի որ այն սահմանափակված էր խորհրդարանի պատգամավորների ձայների մեծամասնության վստահությունը վայելող գործուն և ուժեղ վարչապետի առկայությամբ: 1999 թ. ապրիլից մինչև հոկտեմբեր տևած քաղաքական այդ իրավիճակում վարչապետն իրապես համարվում էր կառավարության գլուխը, և թերևս հենց այդ ժամանակահատվածում էր ցայտուն դրսևորվում պետական կառավարման ոլորտում գործադիր իշխանության երկվությունը:

Սահմանադրական գործընթացների բնականոն զարգացման ընթացքը խաթարվեց 1999 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում տեղի ունեցած ռդբերգական դեպքերի հետևանքով, ինչը ծանր հարված էր հանրային իշխանության ինստիտուտներին և իր ազդեցությունը թողեց քաղաքական ուժերի հարաբերակցության հետագա զարգացումների վրա: Հարկ է ավելացնել, որ 2000 թ. գարնանը նոր վարչապետ նշանակվելուց հետո Ազգային ժողովում առկա քաղաքական ուժերի դասավորությունը չէր համապատասխանում խորհրդարանական ընտրություններով ամրագրված արդյունքներին և, ըստ տրամաբանության, ՀՀ Նախագահը պետք է արձակեր Ազգային ժողովն ու նշանակեր նոր ընտրություններ: Բայց արտասահմանադրական մեխանիզմները նորից գորեղ գտնվեցին. Նախագահը դա չարեց՝ հասկանալով, որ վարչապետին սատարող և իր նկատ-

մամբ լոյս է հարկում հանրապետական կուսակցությունն ու նրան հարող ուժերը նոր ընտրություններից հետո չեն պաշտպանի իր քաղաքականությունը Ազգային ժողովում, ինչը կարող էր երկրում հանգեցնել սահմանադրական լուրջ ճգնաժամի:

Ժամանակի ընթացքում վիճակը հավասարակշռվեց. ՀՀ Նախագահն ու Ազգային ժողովը համագործակցում էին, սակայն վարչապետը նախկինի նման շարունակում էր պահպանել խորհրդարանի պատգամավորների հարաբերական մեծամասնության վրա հիմնված ինքնավարության իր կարգավիճակը: Պետք է ասել, որ 1999 թ. ընտրություններից հետո ձևավորված սահմանադրական այս մեխանիզմը տևական կայունություն է ապահովել պետական կառավարման ոլորտում, որը շարունակվում է մինչ օրս:

Ազգային ժողովի երկրորդ գումարման ընտրություններից ի հայտ եկած սահմանադրական այդ միտումը յուրօրինակ նախադեպ դարձավ նաև Ազգային ժողովի երրորդ գումարման համար, որի ընտրություններն անցկացվեցին 2003 թ. գարնանը՝ հաջորդելով նախագահական ընտրություններին: Օրենսդիր մարմնում 131 մանդատները բաշխվեցին այնպես, որ քաղաքական ուժերից ոչ մեկը ինքնուրույն կառավարություն կազմելու համար վճռական մեծամասնություն չուներ, և դրա համար էլ Երրորդ Հանրապետության գոյության ընթացքում առաջին անգամ երեք կուսակցություններ՝ ՀՀԿ-ն, ՀՅԴ-ն և ՕԵԿ-ը, քաղաքական փաստաթուղթ կազմելու միջոցով ստեղծեցին կոալիցիոն կառավարություն: Այդ փաստաթուղթը հուշագրի տեսքով ստորագրվեց 2003թ. հունիսին, որով ոչ միայն քաղաքական համաձայնությունները իրավականորեն ամրագրվեցին, այլև առաջին անգամ հստակ սահմանվեց երեք կուսակցություններից յուրաքանչյուրի պատասխանատվությունը կառավարության իրենց անդամների գործողությունների համար: Այս քայլով Ազգային ժողովում ապահովվեց կառավարության բնականոն գործունեությանը նպաստող անհրաժեշտ մեծամասնություն: Բայց քանի որ այդ մեծամասնությանը միացան նաև «Ժող. պատգամավոր» խումբը և խմբերում ու խմբակցություններում չընդգրկված պատգամավորների մեծ մասը, ապա Ազգային ժողովը մեծ ու գործուն ընդդիմության բացակայության պայմաններում դարձյալ վերածվեց գործադիր իշխանության կցորդի: Հիշենք, որ 2006 թ. գարնանը Մարդու իրավունքների պաշտպան ընտրելու համար Ազգային ժողովում ծավալված բուռն քննարկումներից հետո ընդդիմության ձայները չբավարարեցին թեկնածու առաջադրելու համար պահանջվող ձայների քանակը, և ընդդիմությունը թեկնածու ունեցավ միայն այլընտրանքային ընտրության պատրանք ստեղծելու նպատակով հանրապետական որոշ պատգամավորների «բարի կամքի» դրսևորման պայմաններում: Այդպիսի իրավիճակում, հաշվի առնելով նաև Մահմանադրությամբ ՀՀ Նախագահին պատկանող գերիզույց լիազորությունները, գործադիր իշխանությունը չափազանց բևեռանում է և դուրս գալիս վերահսկելիությունից, ինչը, անկասկած, փոքրացնում է պետական կառավարման օգտակար գործողության գործակիցը: Այդպիսի իրավիճակում բավական է «մուտք ունենալ Նախագահի վրա» և նրա միջոցով կարելի է վերահսկել հանրապետության ողջ քաղաքականությունը՝ նույնիսկ

ազգի

շահերին

հակառակ²⁰: Հետևաբար, պետական իշխանության ինելամիտ ապակենտրոնացումը, մեր կարծիքով, այլընտրանք չունի:

ՀՀ Ազգային ժողովը պատկանում է հարաբերականորեն որոշակի իրավասությամբ պառլամենտների թվին, քանի որ Հիմնական օրենքը նրա տնօրինության առարկաները և լիազորություններն ամրագրել է ոչ սպառիչ տեսքով: Խորհրդարանի գործունեության առանձնահատկությունները մանրամասնվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով (ընդունվել է 2002 թ. փետրվարի 20-ին): Ազգային ժողովի այդ լիազորությունների ուշադիր քննությունից թվում է՝ կա մի ոլորտ՝ օրենսդրական ոլորտը, որը օրենսդիր մարմնի բացառիկ իրավասությունն է և ենթարկված չէ գործադիր իշխանության ներգործությանը, մանավանդ որ նորմաստեղծության ազատության իր իրավունքը Ազգային ժողովն ամրագրել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթով: Մինչդեռ Ազգային ժողովում քննարկվող օրենսդրական նախաձեռնությունների ճնշող մեծամասնությամբ (1999-2003 թթ.՝ 80% - 20%-ի հարաբերակցությամբ) կառավարությունը նույնիսկ այդ հարցում է նախաձեռնությունը վերցրել իր ձեռքը: Ֆինանսական օրինագծերի մեջ պատգամավորները կարող են փոփոխություններ մտցնել միայն կառավարության եզրակացության առկայությամբ, և վերջապես կառավարությունը կարող է պահանջել, որ օրինագծերը քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով: Իսկ Ազգային ժողովի նախաձեռնությունը համարվող օրինագծին գործադիր իշխանությունը միշտ էլ կարող է հակադրել նախագահական վետոն, որը, պայմանավորված լինելով խորհրդարանի կուսակցական կազմով, գրեթե անհնարին է լինում հաղթահարել: Զրկված լինելով կառավարման ոլորտում գործուն մասնակցություն ունենալու իրավունքից՝ Ազգային ժողովը կարող է ազդել գործադիր իշխանության վրա կառավարության գործունեության նկատմամբ ունեցած վերահսկողական լիազորությունների միջոցով միայն, բայց, պետք է ասել, որ դրանք ոչ այնքան արդյունավետ են: Այսպես, պատգամավորներն իրավունք ունեն հարցերով դիմելու կառավարությանը (80-րդ հոդված), սակայն դա որևէ իրավական հետևանք չի ունենում, քանի որ հարցերի կապակցությամբ քննարկումներ չեն ծավալվում, և Ազգային ժողովը որոշումներ չի ընդունում: Սահմանադրությամբ ամրագրված է կառավարության պառլամենտական պատասխանատվության ինստիտուտը (74-րդ և 84-րդ հոդվածներ), սակայն դրա իրականացման դժվարություններն արդեն բացատրվել են վերևում՝ առաջին գումարման Ազգային ժողովի կարգավիճակի՝ վերը բերված քննարկման կապակցությամբ: Հետաքրքիր է, որ Ազգային ժողովի գործող կանոնակարգն իր 107-րդ հոդվածի առաջին մասով ամրագրել էր կառավարությանն անվստահություն հայտնելու մասին նախագիծ ներկայացնելու առանձին պատգամավորի իրավունքը, սակայն 2005 թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով բարեփոխված Սահմանադրության 84-րդ հոդվածն այդ իրավուն-

²⁰ Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 93:

քը վերացրել է: Հետևաբար, մեր հասարակության մեջ որոշակի անվստահություն է ձևավորվել հանրապետության օրենսդիր մարմնի նկատմամբ: Դրանում ընդգրկված ակտիվ քաղաքական ուժերի առանձին ներկայացուցիչների նշանակումը կառավարության կազմում ավելի է թուլացնում Ազգային ժողովի ինքնուրույնությունը²¹: Սակայն քաղաքական լայն շրջանակների ներկայացուցիչները գիտակցում են, որ խորհրդարանի հեղինակագրկումը կարող է մեծ չափով խարխլել հանրապետությունում չնայած դժվարությամբ, բայց աստիճանաբար արմատավորվող ժողովրդավարության հիմքերը: Թերևս հենց այդ իրողությունն էր պատճառը, որ նախապատրաստվեց և 2005 թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով ուժ ստացավ սահմանադրական փոփոխությունների փաթեթը, որը նպատակ ուներ բարձրացնելու Ազգային ժողովի դերը պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգում և մասամբ ամրագրեց վերջին տարիների ընթացքում պետական շինարարության մեջ նկատվող պառլամենտական կառավարման ձևին բնորոշ իրողությունները: Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ չնայած իրականացված փոփոխություններին, ուժեղ և գործուն խորհրդարան ձևավորելու գործընթացը թերի է մնացել, և պետք է հուսալ, որ սահմանադրական զարգացումներն ապագայում կկարողանան լրացնել այդ բացը:

Այսպիսով, դժվար է չհամաձայնել Ժ. Ջհանգիրյանի հետ, որ նախագահական համակարգի «ուժեղ նախագահ-ուժեղ խորհրդարան» և խորհրդարանականի՝ «թույլ նախագահ-ուժեղ խորհրդարան» հիբրիդը հանգեցնում է «ուժեղ նախագահ-թույլ խորհրդարան» համակարգի²²: Մինչդեռ իշխանության «ողնաշարը» պետք է կառուցվի «ուժեղ նախագահ-ուժեղ խորհրդարան» սկզբունքով: Վերջ ի վերջո, յուրաքանչյուր երկրում օրենսդիր բարձրագույն մարմինը հանդես է գալիս որպես տվյալ ազգի, ժողովրդի քաղաքական ավանդույթների և քաղաքական մշակույթի մակարդակի յուրօրինակ մարմնավորողը:

ОСОБЕННОСТИ КОНСТИТУЦИОННОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

БАЗОЯН Е. И.

Резюме

После распада Советского Союза 15 бывших союзных республик, став полноправными субъектами международного права, на-

²¹ **Այվազյան Ն.**, Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Ե., 2003, էջ 449:

²² **Джангирян Ж.**, *указ. соч.*, с. 71.

чали самостоятельно строить свое будущее посредством заложения основ государственного суверенитета.

Армения вступила на путь конституционного развития в условиях войны, энергетического кризиса и всеобщего политического хаоса, проведя в 1990 году первые многопартийные и свободные выборы. Образовавшийся после выборов Верховный совет заложил конституционные основы независимой республики, приняв ряд важнейших конституционных законов, учредив пост президента страны, создав тем самым юридическую базу для организации государственной власти.

Конституция Третьей Республики учредила в Армении президентскую форму правления, закрепив за президентом право назначать и увольнять премьер-министра, формировать правительство страны, назначать высших государственных чинов, судей всех инстанций и четырех членов Конституционного суда. Тем самым функции Национального собрания были сильно урезаны и из всеильного органа учредительной власти парламент превратился во вспомогательный орган при президенте.

Конституционная реформа от 27 ноября 2005 года преследовала цель уравновесить полномочия обеих ветвей власти – законодательной и исполнительной, однако сбалансированность горизонтали государственной власти оставляет желать лучшего.